



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» հոկտեմբերի 2012թ.

N 92-Ա/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՄԱԼԻՐ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՇԱՏԻ, ԱՐԱՐԱՏԻ, ՄԱՍԻՍԻ ԵՎ
ՎԵԴՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետի պահանջով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) N 2 հավելվածի 5-րդ և 6-րդ կետերի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում համալիր սոցիալական ծառայությունների Արտաշատի, Արարատի, Մասիսի և Վեդու տարածքային կենտրոններ տեղակայման հետևյալ հասցեներում.

Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի անվանումը	Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայվող մարմինների անվանումները	Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի հասցեն
Համալիր սոցիալական ծառայությունների Արտաշատի տարածքային կենտրոն	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների Արտաշատի տարածքային գործակալություն	Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ, քաղաք Արտաշատ, Իսակովի 47
	Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայության սոցիալական ապահովության Արտաշատի տարածքային բաժին	
	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության	

	գբաղվածության Արտաշատի մարզային կենտրոն	
Համալիր սոցիալական ծառայությունների Արարատի տարածքային կենտրոն	Արարատի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների Արարատի տարածքային բաժին	Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ, քաղաք Արարատ Շահումյան 34
	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության գբաղվածության Արարատի տարածքային կենտրոն	
	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության N2 բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով	
Համալիր սոցիալական ծառայությունների Մասիսի տարածքային կենտրոն	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի Սոցիալական ծառայությունների Մասիսի տարածքային գործակալություն	Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ, քաղաք Մասիս, Կենտրոնական հրապարակ 4
	Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայության սոցիալական ապահովության Մասիսի տարածքային բաժին	
	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության գբաղվածության Մասիսի տարածքային կենտրոն	
	Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության N1 բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով	
Համալիր սոցիալական ծառայությունների Վեդու տարածքային կենտրոն	Սոցիալական ծառայությունների Վեդու տարածքային գործակալություն	Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ, քաղաք Վեդի, Արարատյան 55
	Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայության սոցիալական ապահովության Արարատի տարածքային բաժին	
	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության	

	պետական ծառայություն» գործակալության գրադվածության Վեդու տարածքային կենտրոն	
--	---	--

2. Համալիր սոցիալական ծառայությունների Մասիսի տարածքային կենտրոնում համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետ Վ. Հովսեփյանին, համալիր սոցիալական ծառայությունների Վեդու տարածքային կենտրոնում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների Վեդու տարածքային գործակալության պետ Դ. Շիրինյանին, իսկ համալիր սոցիալական ծառայությունների Արտաշատի տարածքային կենտրոնում համակարգողի պարտականությունները ժամանակավորապես դնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ռազմավարական ծրագրերի և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի և վերահսկողության բաժնի պետ, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից նշանակված պատասխանատու Ա. Եղիազարյանի, համալիր սոցիալական ծառայությունների Արարատի տարածքային կենտրոնում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի միջազգային կապերի բաժնի գլխավոր մասնագետ, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից նշանակված պատասխանատու Մ. Մխիթարյանի վրա:

3. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների համակարգողներին՝ քննարկելով կենտրոնում տեղակայված սոցիալական բաժինների ղեկավարների հետ, 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ներկայացնել սոցիալական դեպք վարողների, միասնական ընդունարաններում աշխատողների, դիմում մշակողների, միասնական ընդունարանի խորհրդատվական սենյակում աշխատող խորհրդատուների թեկնածությունները:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանին:



Ա. ԱՍԱՏՐՅԱՆ